Հավելված
ՀՀ կառավարության 2026 թվականի
հուլիսի 16-ի N 1052 - Լ որոշման

*«Ձև N 1*

| ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ՄԻՋՈՑԱՌՈՒՄՆԵՐԻ ԾՐԱԳԻՐ | | | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| *Ուղիղ մեջբերվում է կառավարության ծրագրով սպանձնած հանձնառության (նպատակը, բարեփոխումը, թիրախը կամ այլ ձևակերպմամբ) կետի հերթական համարը, և մեկ նախադասությամբ ներկայացվում է Կառավարության ծրագրով սահմանված հանձնառությունը:* | | | | | | | | | |
| **N** | **Միջոցառում** | **Նկարագրություն** | **Ուղղակի արդյունքի ցուցանիշ** | **Միջանկյալ արդյունքի ցուցանիշ** | **Պատասխանատու** | **Համակատարող (համակատարողներ)** | **Վերջնա-ժամկետ** | **Ֆինանսավորման կանխատեսվող չափը** | **Ֆինանսավորման աղբյուրը** |
| | *Լրացվում է այն գործողությունը, որը հանրային իշխանության մարմինն իրականացնելու է Կառավարության ծրագրով սահմանված համապատասխան նպատակին հասնելու համար: Գործողությունը չպետք է պարունակի ամենօրյա գործառնական միջոցառումներ:* | *Տրվում է միջոցառման հստակ, բայց սեղմ նկարագիրը (առավելագույնը 50 բառ): Հավելյալ ներկայացվում է նաև այն իրավական ակտերի ցանկը, որոնք ընդունելու կարիք կարող է առաջանալ միջոցառման իրականացման ընթացքում:* | *Լրացվում է միջոցառման հստակ, չափելի, ստուգելի և իրատեսական անմիջական հետևանքը (ծառայություն, արտադրանք, ապրանք և այլն):* | *Նշվում է ուղղակի արդյունքից բխող կառավարելի և չափելի հետևանքը՝ արտացոլելով հանրային կյանքի բոլոր ոլորտներում, այդ թվում՝ քաղաքացու և բիզնեսի կյանքում ակնկալվող արդյունքը: Նույն ցուցանիշը կարող է վերաբերել մի քանի միջոցառումների՝ իբրև վերջիններիս գումարային արդյունք:* | *Նշվում է այն գերատեսչությունը, որն առաջնորդելու է միջոցառման իրականացման ամբողջ գործընթացը և պատասխանատու է լինելու դրա արդյունքների համար:* | *Սահմանվում են այն գերատեսչությունները, որոնք ներգրավվելու են միջոցառման իրականացման աշխատանքներում:* | *Սահմանվում են միջոցառման ավարտի ամիսը և տարեթիվը: Եթե միջոցառումը շարունակական է, ապա հնարավորության դեպքում անհրաժեշտ է սահմանել մի վերջնաժամկետ, որի ժամանակ կգնահատվի միջոցառման արդյունավետությունը՝ իրականացման շարունականությունը որոշելու նպատակով:* | *Նշվում է միջոցառման համար կոնկրետ ֆինանսավորման համար կանխատեսվող ծավալը՝ ընդհանուր գումարով: Եթե ֆինանսավորման կարիք առկա չէ, ապա նշվում է «Հավելյալ ֆինանսավորում չի պահանջվում»: Առկայության դեպքում նշվում է նաև այն բյուջետային ծրագրի և միջոցառման դասիչը, որի շրջանակներում իրականացվելու է միջոցառման ֆինանսավորումը: Այն դեպքերում, երբ ֆինանսավորման աղբյուրներն ավելի են մեկից, նշվում են բոլոր աղբյուրներն ու ընդհանուր ֆինանսավորման ծավալում դրանց համամասնությունները:* | *Նշվում է միջոցառման ֆինանսավորման աղբյուրը (աղբյուրները) (պետական բյուջե,զարգացման կոնկրետ գործընկերոջից ներգրավվող դրամաշնորհային միջոցներ կամ ՊՄԳ ձևաչափ):* |

»:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՎԱՐՉԱՊԵՏԻ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ
ՂԵԿԱՎԱՐԻ ՏԵՂԱԿԱԼ

Ա. ԽԱՉԱՏՐՅԱՆ

16.07.2026
ՀԱՎԱՍՏՎԱԾ Է ԷԼԵԿՏՐՈՆԱՅԻՆ ՍՏՈՐԱԳՐՈՒԹՅԱՄԲ